

ԽՈՐԹ ՄԵՐԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարձրագույն (խոսվածք)

Հին ժամանակները մի մեր ու տղա են լինում: Էդ մերը խորթ ա լինում, Դրանք հաշտ ապրում են, տղեն որսորդություն ա անում, իսկ մերը ճաշ ա եփում, տան գործերն անում:

Օրերից մի օր տղեն գնում ա ուրիշ թագավորություն որսի: Մերը հետևից հասնում ա ու թե՛ «Ես տանը չեմ կարա մնա, ես էլ եմ գալի»:

Դրանք ճամփա են ընկնում, գնում: Շատ են գնում, քիչ ճանապարհին մի շենքի են հանդիպում: Դեռ են նայում, դեն են նայում, մեկ էլ տեսնում են դռան վրա մի մեծ քար ա գցած: Տղեն որ մեծ ուժի տեր ա լինում, քարը մի կողմ ա շպրտում: Սրանք ներս են մտնում: Դու մի ասի՝ դա յոթ դների պալատն ա լինում: Մեր ու տղա էդտեղ ապրում են: Տղեն որսի ա գնում, իսկ մերը՝ ճախարակ մանում: Դրանց օրը անցնում ա հաշտ ու խաղաղ:

Մի անգամ էլ դները, որ ամառանոց են գնացել, որոշում են գնան իմանան, թե իրանց պալատի վիճակը ինչպես ա: Վիճակ են գցում ու, արի ու տես, վիճակն ընկնում ա փոքր աղբորը:

Փոքր դեր ճամփա յա ընգնում, գալիս հասնում իրանց պալատը: Գալիս ա, ի՞նչ տեսա, տանը մի կնիկ իրա համար հանգիստ ճախարակ ա մանում: Էդ կնիկն էլ, որ միջին տարիքի սիրուն, այց ունքը բաց կնիկ ա լինում, Դևին դիր ա գալի, Դեր դրա վրա սիրահարվում ա, կնիկն էլ դրան ա սիրում: Դեն իմանում ա, որ տղեն մեծ ուժի տեր ա, ու դրանք իրար հետ կապվելով՝ որոշում են ամուսնանան, միայն թե տաղեն արանքից դուրս գա: Դրանք խոսքերը մին են անում ու աշխատում են տղի գլխին մի օյին խաղան: Իրիկունը, երբ տղեն որսից գալիս ա, Դեր թագնվում ա, իսկ ցերեկը, երբ տղեն գնում ա որսի, Դեն ու տղի մերը կյանք են քաշում:

Օրերից մի օր էլ մերը սուտի հիվանդանում ա ու տղին ասում. թե.— Ասլանի կաթ ա սիրտս ուզում:

Էդպես ա ասում, որ տղին ասլանն ուտի, ու ինքն ու Դեր ազատ կյանք ունենան: Տղեն ազնիվ, խելոք տղա յա լինում, հավատում ա մորը ու ճամփա ընկնում, որ գնա ասլանի կաթ բերի, մորը փրկի մահի ձեռքից:

Շատ ա գնում, թե քիչ ա գնում, էդ իգիթ տղեն ճանապարհին մի ծեր մարդու ա հանդիպում:

Ծերունին դրան ասում ա, որ.— Քեզ դիտավորյալ են ուղարկել, բայց գնա, ասլանը ոտին մոծուկ ունի, պտի պայթացնես: Ասլանը կասի՝ «Դուրս արի», դուս չես գա, երկրորդ անգամ կասի՝ «Դուրս արի», էլի դուրս չես գա, երրորդ անգամ, որ ասի— դուրս կգաս:

Էդ որսորդ տղեն ճանապարհը շարունակում ա ու երկու օրից հետո հասնում ա մի անտառի:

Մեկ էլ լսում ա, որ ասլանը չիբանի պատճառած ցավից ձենն անտառն ա գցել:

Թաքուն մոտենում ա ու ձեռի փետով պայթեցնում չիբանը: Ասլանի ոտի ցավը անմիջապես կտրվում ա թե չէ, ասում ա.— Ով էլ որ ես, իմ փրկիչն են, դուրս արի:

Բայց տղեն դուրս չի գալիս, երկրորդ անգամ ա ասում, էլի դուրս չի գալիս, իսկ երբ որ երրորդ անգամ ա ասում, տղեն դուրս ա գալի:

— Իսան օղլի, ասա, ուզածդ տամ,— ասում ա ասլանը էդ տղին:

Դա թե. «Քու կաթն եմ ուզում, մերս հիվանդ ա. պտի տանեմ, որ խմի լավանա»:

Ասլանը դրան ասում ա, որ ինքը հղի ա, մի երկու օրից հետո կծնի, թող կթի տանի:

Տղեն իրա հըմար անտառում որս ա անում, ճամփա յա պահում, մինչև որ Ասլանը ծնի:

Վերջապես էդ օրն էլ ա գալի: Բայց արի ու տես ծնելու ժամանակ Ասլանը շատ դժվարության ա հանդիպում ու տղին խնդրում ա, որ օգնի՝ ազատվելու: Տղեն օգնում ա, Ասլանը ծնում ա ու

իրեք ձագ ա բերըմ: Տղեն էրկու ձագը թաքուն գցըմ ա խուրջինի մեջ ու Ասլանին էսպես ա ասըմ.— Տնաշեն էս մի ձագի պատճառով գլուխդ կորցրել իր:

Ասլանը էդ խոսքից ամաչըմ ա, դե ինքը Ասլան, մարդը իրան հանդիմանըմ ա ցավին դիմանալու հարցում:

Էդքան լավություն անելու հմար, բացի էդ, որ տղեն կաթը տանելու աման չի ունենըմ, տղին Ասլանն ասըմ ա.— Ասլանը ջուխտ կբերի, կենտ բերելը ամոթ ա, էդ ձագը մաշկի, կաթը լցրու փոստի մեջ ու տար:

Տղեն մտքըմ ուրախանըմ ա, Ասլանի ձագին մաշկըմ ա, Ասլանին կթըմ ա փոստի մեջ ու մնաս բարով ասելով ճանապարհի ա ընկնըմ դեպի իրանց ապրելու տեղը:

Գալիս ա գալի, վերջը ճանապարհին մի ապարանքի ա հանդիպըմ, մեջը մի գեղեցիկ աղջիկ: Ի՛նչ աղջիկ էմ ասել, իսկը հուրի մալաք, ո՛չ ուտես, ո՛չ խմես, դրան նայես: Էնքան գեղեցիկ ա լինըմ, որ արևին ասըմ ա «Արև դու դուրս մի գա, ես դուրս էկած եմ»:

Դրանք սիրահարվըմ են ու որոշըմ են ամուսնանալ:

Բայց տղեն ասըմ ա.— Հիվանդ մեր ունեմ, էս Ասլանի կաթը տանեմ խմի, լավանա, ես էլի հետ կգամ, կամուսնանանք:

Աղջիկը համաձայնվըմ ա:

Բաժանվելու ժամանակ տղեն աղջկանն ասըմ ա.— Մի շիշ կաթ դիր սեղանին, որ պղտորվի, Ասլանի ձագերը բաց կթողաս:

Աղջկանը էդտեղ թողնըմ ա, ինքը ճանապարհը շարունակըմ: Վերջապես մի օր էլ հասնըմ ա տեղ: Խորթ մերը շատ ա ափսոսըմ, որ տղեն էկել ա, բայց դե ինչ պտի անի, ստիպված Ասլանի կաթը խմըմ ա ու ձևացնըմ, թե առողջացել ա:

Հաջորդ օրը, երբ տղեն գնըմ ա որսի, Դեր իրա սիրականին ասըմ ա թե.— Իմացի, տես դրա հունարն ընչի՞ մեջ ա:

Իրիկունը տղեն որսից գալիս ա, մերը ցույց ա տալի, թե տղին շատ ա սիրըմ ու մեկ էլ տղին էսպես ա ասըմ.— Տղա ջան, մենք մեր ու տղա ենք, իրար էնքան ենք սիրըմ, ինչքան հարազատները չեն սիրի, բայց մինչև հիմա չես ասել, թե հունարդ ընչի մեջ ա, որ ես էլ, քու քոռացած մերն եմ, իմանամ:

Տղեն ասըմ ա թե.— Հունարը ավլի մեջ ա:

Տղի որսի գնացած ժամանակ, Դեր թագնված տեղից դուրս ա գալի, ու դրանք ավիլը վառըմ են, ուրախանըմ են, որ էս ա տղեն կթուլանա, իրանք գլխին օյին կխաղան, ազատ կյանք կքաշեն: Բայց տղեն որ գալիս ա ու մերը տեսնըմ ա ահագին վարազը շալակին, համոզվըմ ա, որ տղեն իրան խափել ա:

Հաջորդ օրը, երբ տղեն պատրաստվըմ ա որսի գնալու, մերը նրան ասըմ ա.— Տղա ջան, հանաք մի անի, իսկականից ասա իմանամ հունարդ ընչի մեջ ա:

Տղեն թե.— Գութանի շղթայի մեջ ա:

Մերը գութանի շղթայով տղին կապըմ ա ու ասըմ.— Դե, տղա ջան, հունարդ ցույց տուր, սիրտս ուրախանա:

Տղեն իրան, որ չի թափահարը՛մ, շղթան մի քանի կտոր ա լինըմ:

— Տղա ջան,— ասըմ ա մերը,— հունարդ դրա մեջ չէր, ասա իմանամ, սիրտս ուրախանա:

— Այ մեր, ինչ թագցնեմ, հունարս անդի լարի մեջ ա,— ասըմ ա տղեն:

Մերը անդի լարը բերըմ ա ու տղի բթերը կապըմ: Տղեն ինչ անըմ ա, չի անըմ, չի կարողանըմ կտրի:

Էդ ժամանակ Դեր թագնված տեղիցը դուրս ա գալի: Տղի հմար ամեն ինչ պարզ ա դառնըմ:

— Բա ի՞նչ անեմ, այ մեր, ձեռներս ազատի,— ասըմ ա տղեն:

— Ի՞նչ ուզում ես արա,— պատասխանում ա մերը,— Բայց որ տղես ես, չենք սպանի:
Խորթ մերն ու Դեր տղի աչքերը հանում են, աջ աջքը գցում են ձախ գրպանը, ձախ աչքը՝ աջ
գրպանը ու տանում գցում են մի գյուղից քիչ հեռու գտնվող հորի մեջ:

Իրանք գնում են իրանց հմար քեֆ քաշում:

Տղին թողանք հորի մեջ, խոսքը տանք նրա սիրած աղջկանը:

Սա շատ ա ճամբա պահում, քիչ, ինքը չի իմանում, օրը տարի ա թվում: Մի առավոտ էլ վեր ա
կենում, տեսնում շշի կայթը պղտարվել ա:

— Վա՛խ, սիրածիս կյանքը վտանգի մեջ ա,— ասում ա աղջիկն ու Ասլանի ձագերին Բաց ա
թողում:

Սրանք արդեն մեծացած են լինում, անմիջապես վազում են, գալիս են գյուղը, որի մոտ ջրհորում
իրանց տերն ա լինում: Գյուղացու մեկը ասլաններին մի կտոր հաց ա տալի, դրանք տանում են
գցում հորի մեջ:

Մի քանի օր էդպես կրկնվում ա: Գյուղացին հետևում ա ասլաններին մինչ հորի մոտ, ձեն ա
տալի, տեսնում ա մեջը մարդ կա:

Պարանը գցում ա հորի մեջ ու տղին հանում: Մի քանի օր իրա տանը պահելուց հետո
գյուղացին էդ տղին տալիս ա կույրանոց: Օրերից մի օր էլ դա մի կանացի ձայն ա լսում, հենց
իրա սիրածի ձայնի նման: Դու մի ասիլ, որ սիրածը տեսնելով, որ ասլաններին էլ Բաց թողեց,
էլի սիրածը չկա, ինքն ա ճանապարհ ընկնում, որ մի լուր իմանա սիրած տղի մասին, ու գալիս
ա կուրանոցում աշխատանքի մտնում: Էստեղ ա, որ տղեն ձենիցը ճանաչում ա, Բայց դե աղջիկը
չի ճանաչում:

Տղեն մի օր աղջկա տված մատանին գցում ա չայի մեջ ու խնդրում ա աղջկանը, որ խմի: Աղջիկը
չի մերժում, չայը խմելիս մատանին ընկնում ա բերանը, հանում ա, տեսնում ա իրա մատանին,
որ նվիրել էր սիրածին: Տղին ճանաչում ա, ընկնում ա թնն ու ճանապարհվում դեպի իրա
ապարանքը: Ճանապարհին դրանք մի կանաչ տեղ նստած լաց լինելիս են լինում, էրկու
աղունակ լսում են, խղճահարվում են ու փետուր են տալիս:

Աղջիկն աչքերը դնում ա տեղը, փետուրը ջրի մեջ թաթախում ա, քսում աչքերին:

Էդպես աչքերը կպցնում ա, Բայց թարս՝ աջը ձախին, ծախը՝ աջին:

Դրանք գնում, հասնում են դների պալատը: Տեսնում են Դեին ու խորթ մերը թախտի վրա իրար
հետ զգվում են, հանաք անում: Դեր, որ տղին տեսնում չի, տեղը չորանում ա, լիզուն կապ ա
ընկնում, մերն էլ թները Բաց արած ուզում ա տղի վզովն ընկնի: Բայց տղեն մորն իրանից
հեռացնում ա, թուրը հանում, սպանում, իսկ Դեին մենակ մի քանի ապտակ ա հասցնում: Դե,
իսկական մեղավորը մերն ա լինում:

Տղա ու աղջիկ հասնում են տեղ ու իրար հետ ուրախ, երջանիկ ապրում:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին: